



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- մայիսի 2018 թվականի №---Ա
ք.Երևան

**«ՀԵՐ-ՀԵՐ» ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՀԵՐ-ՀԵՐ»
ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ)
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 3-ի «Արմ-Աէրո» փակ բաժնետիրական ընկերությունն առանձնացման ձևով վերակազմակերպելու մասին» №373Ա որոշումը, «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի ապրիլի 16-ին ներկայացված հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել «Հեր-Հեր» փոքր հիդրոէլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածքում (Արփա գետի Հեր-Հեր վտակի Հեր-Հեր ջրամբար, ոռոգման համակարգ)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ տասնհինգ տարի գործողության ժամկետով:
2. Հաստատել «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար կհաշվարկվի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 19-ի «Որոտանի հիդրոէլեկտրակայանների

համալիր» փակ բաժնետիրական ընկերության «Հեր-Հեր» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին №186Ա որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 2015 թվականի օգոստոսի 1-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մայիսի -ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- մայիսի 2018թ.
Ժամը ⁻⁰⁰